ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի թիվ 91-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Ստեղծել աշխատանքային խումբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի զարգացման և զբոսաշրջությանն ուղղված ծրագրերի քննարկման, ուսումնասիրման և մշակման նպատակով՝ համաձայն հավելվածի:

Աշխատանքային խմբին՝

2.Մարզի գործարար ոլորտի արդիականացման թվայնացման ու տեխնոլոգիական նորամուծությունների ներդրման հետ կապված աշխատանքների կազմակերպում:

3.Մարզի կայուն զարգացմանը, դիմակայունության բարձրացմանն ու միջազգայնացմանն ուղղված ռազմավարական նախագծերի մշակմանը աջակցում:

4.Եռամսյա ժամկետում ուսումնասիրել մարզի սոցիալ-տնտեսական և զբոսաշրջային ենթակառուցվածքների վիճակը, արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:

5.Ամենամյա կիսամյակային կտրվածքով մշտադիտարկել զարգացման միտումները և ներկայացնել տեղեկատվություն:

Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2023թ. ապրիլի 20
ք.Իջևան

«Հավելված»
ՀՀ Տավուշի մարզպետի
20 ապրիլի 2023թ. թիվ 91-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Անդամներ՝

Նարեկ Ղուշչյան – ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ,

Գուրգեն Հարությունյան - Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ,

Սոս Խաչիկյանին – ՀՀ պետական տնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ /համաձայնությամբ/:

Գլխավոր քարտուղար՝ Ա.Գևորգյան

21.04.2023

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241